ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Բաժնի պետը՝

1) «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարման գործընթացում կազմակերպում, վերահսկում է բաժնի աշխատանքները,

2) կայացնում է բաժնի գործառույթներին վերաբերվող որոշումներ,

3) հսկողություն է սահմանում Ծառայությունում առաջին անգամ պաշտոն զբաղեցնող անձի փորձաշրջանի նկատմամբ,

4) վերահսկում է կատարողական վարույթների արխիվացման գործընթացը,

5) վերահսկում է կատարողական վարույթների վարման համակարգում տվյալների և հաշվետվությունների գեներացման գործընթացը և ներկայացնում է Բաժնի հաշվետվությունը,

6) օրենսդրությամբ վերապահված լիազորությունների սահմաններում տնօրինում է բաժնի դեպոզիտ հաշիվը և վերահսկում է Ծառայության դեպոզիտ հաշվին փոխանցված դրամական միջոցների բաշխման գործընթացը,

7) իրականացնում է «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված և Ծառայության կանոնադրական խնդիրներից և նպատակներից բխող այլ գործառույթներ:

2. Պաշտոնին ներկայացվող պահանջները.

Հարկադիր կատարման ծառայության բաժնի պետի պաշտոնում կարող է նշանակվել այն անձը, որը զբաղեցրել է Ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն երկու տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: